

ՋԵՎԴԵԹ՝ՓԱՇԱ (ԱՀՄԵԴ-ՋԵՎԴԵԹ) — جودت باشا

XVIII դար

«ԹԱՐԻԽԻ ՋԵՎԴԵԹ» — تاريخ جودت

(1188—1241 pp., 1774—1825 pp.)

Ահմեդ-Ջեվդեթ փաշան, որը հայտնի է նաև Հաջի-Իսմայիլ-Ջադե ազգանունով, թուրք պատմագիրների շարքում դրամում է շատ կարևոր տեղ։

Նրա կենսագրական տեղեկությունների մեջ ծննդյան թվականը որոշակի չի ցույց տրվում, սակայն, հավանաբար ծնվել է XIX դարի 2-րդ տասնամյակին, քանի որ նա մահացել է մոտ 80 տարեկան հասակում 1312 թ. (1894)։

Ապրելով և կրթություն ստանալով Ստամբուլում, Ջեվդեթ փաշան, իբրև պետական բարձրաստիճան աշխատակցություն, մոտիկից և ակտիվորեն մասնակցում է այդ շրջանի [XIX դարի] Օսմանյան կառավարության պետական-վարչական, քաղաքական-դիվանագիտական, կուլտուր-կրթական ասպարեզների բաղմատեսակ գործերին։ Միայն նրա ծառայությունների և վարած պաշտոնների թվարկումը ցույց է տալիս, թե որքան ընդարձակ և բազմակողմանի է եղել Ջեվդեթ փաշայի գործունեության պետական ասպարեզը։ Մոտ 50 տարի նա ծառայել է պետական տարբեր բարձր հիմնարկություններում։

Վալիի պաշտոնով ծառայել է Ադանայում, Հալեպում, Մարաշում և Սուրիայում։ Վարել է մի շարք մինիստրություններ՝ հանրային կրթության (4 անգամ), Արդարադատության (4 անգամ), Ներքին գործերի, Առևտրի և էվլաֆի Ջեվդեթ փաշայի պետական ծառայությունների մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում նրա մասնակցու-





սուլթաններին, շնայած որ սուլթանը՝ իբրև իսլամական խալիֆոս (Մարգարեի փոխանորդը) սուրբ անձնավորություն է համարվում և անքննադատելի է: Ջևվդեթ փաշայի լեզուն ու ոճը անհամեմատ պարզ են և կատարելագործված, բան նախորդ պատմագիրների լեզուն:

«Թարիխի Ջևվդեթը» տրագրված է մի քանի անգամ: Մեր ձեռքի տակ եղածը նրա 2-րդ և 3-րդ տպագրությունն է: Տպագրությունը տեղի է ունեցել Ստամբուլում պետական տպարանում 1288 թ. և 1302 թ. (1871 թ. և 1884 թ.):

«Թարիխի Ջևվդեթից» մենք թարգմանել և քաղվածաբար տվել ենք լրավականին ընդարձակ նյութեր. առաջին հերթին այն նյութերը, որոնք կապված են Հայաստանի և հայերի հետ: Նկատի առնելով պատմական ժամանակաշրջանի բացառիկ կարևորությունը, թարգմանել ենք նաև մի շարք նյութեր, որոնք կապված են ուսման, թուրքական, թուրք-պարսկական և թուրք-վրացական հարաբերությունների հետ, առանձնապես այն նյութերը, որոնք կապված են Վրաստանի շերակը թաղավորի երկարատև գործունեության հետ: Թարգմանել ենք նաև բավականին նյութեր, որոնք վերաբերում են երկրի ներքին դրությունը, քանի որ այդ դրություն հետ անմիջական կապ են ունեցել նաև Ոսմանյան պետության մեջ ապրող հայերը:

«ԹԱՐԻՒՍԻ ՋԵՎԴԵԹ» — تاریخ جودت

(Հատ. I)

1190 թվականի (1776) դեպքերից

Իրանի վիճակը և Իրանի դեմ արշավանք սկսելու որոշումը

Պատմագիր Ջևվդեթ փաշան մանրամասնորեն պարզաբանում է Իրանի վիճակը: Նադիր-Շահը մի որոշ ժամանակ աշխարհակալություն անելուց հետո սպանվում է: Իրան հաջորդող շահերը չեն կարողանում տեական իշխանություն ստեղծել. բացի այդ, Իրանի խաներից շատերը հետամուտ են լինում անկախություն ձեռք բերելուն: Այդ խաների, Ջենդ-Քերիմ-խանը կարողանում է Իրանի ժողովրդին իր կողմը զրավել, ընկճել մյուս խաներին, նվաճել Ֆարսն ու Իրաքը, նորասանի երկրի մեծ մասը: Ազրբեջանի խաները թեև պահպանում են իրենց անկախությունը, սակայն նրանք էլ Քերիմ խանի հետ բարեկամական կապ են հաստատում:

Պատմագրի ասելով՝ Քերիմ խանը, նկատի ունենալով իր ոչ-ազնվական ծագումը (նա Շիրազի շրջանի քոչվոր քրդական ցեղերից էր) շահի տիտղոս չի կրում, բավականանում է «Իրանի վերի» կոչումով: Նա իր իշխանության մայրաքաղաքը րնտրում է Շիրազը: Քերիմ խանը և նրա հաջորդները Իրանում քառասուն տարուց ավելի իշխել են: Ջենդի անունով Ոսմանյան կառավարությունը պաշտո-























































































































































































